# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ ____________________

« _____» _______________ 2023 թ.

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
հասցե՝ ք.Վանաձոր Տիգրան Մեծի 47/13
էլ.փոստ՝ karapetyan-mary@mail.ru

Ձեր 06.06.2023թ. թիվ 832665 գրության.

Հարգելի Մերի Կարապետյան

Հայտնում եմ Ձեզ, որ մարզպետարանը չունի տեղեկատվություն Ձեր գրավոր հարցմամբ բարձրացված խնդիրների վերաբերյալ, քանի որ տվյալ գույքի հանձնում-ընդունումը կատարվել է «ՀայԷներգո» ՊՓԲԸ-ի և Ձորագետ համայնքի միջև կազմված հանձնման-ընդունման ակտով:

Ձորագետ համայնքը ներկայումս գտնվում է Փամբակ միավորված համայնքի կազմում: Ներկայացնում եմ Փամբակ միավորված համայնքի ղեկավարի պարզաբանումը Ձեր բարձրացրած խնդիրների վերաբերյալ:

Առդիր էլեկտրոնային նյութ:

13/06/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Մ.Գրիգորյան
հեռ. /0322/ 4-34-99

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
«Հայէներգո» ՊՓԲԸ գործադիր տնօրեն
.........................Կ.Կարապետյան
«20» 11 1999թ.

# ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

# ԱԿՏ

Հանձնաժողովը բաղկացած հանձնող կողմից՝ հանձնաժողովի նախագահ «Հայէներգո» ՊՓԲԸ ֆինանսական տնօրեն Մ.Ղահրամյանի, հանձնաժողովի անդամներ՝ «Հայէներգո» ՊՓԲԸ գլխ.հաշվապահ Ա.Հարությունյանի, «ՁորաՀԷԿ» տեղամասի պետ Ռ.Հակոբյանի, «ՁորաՀԷԿ» տեղամասի հաշվապահ Ռ.Թամարյանի, ընդունող կողմից՝ Ձորագետի համայնքի ղեկավար Լ.Գրիգորյանի, գլխ.հաշվապահ Կ.Շերմազյանի, կատարեցին Ձորագետավանի բնակելի ֆոնդի և ավանում գտնվող մյուս ինժեներական կոմունիկացիաների հաշվեկշռից հաշվեկշիռ հանձնում-ընդունում համաձայն ՀՀ ԷՆ 16.08.99թ. թիվ ՕՏ-Դ2-10-2667 առաջարկության և ՀՀ Լոռու մարզպետի 09.09.99թ. թիվ ԼՄ.064/3884-01 գրության:

«Հայէներգո» ՊՓԲԸ-ը հանձնում է, իսկ Ձորագետավանի համայնքը ընդունում է սույն ակտի՝ երկու էջից բաղկացած, հավելված 1-ում նշված, 245815.444 դրամ գնահատված 29 (քսանինը) անուն հետևյալ հիմնական միջոցները:

Հավելված 1

| Հ/Հ | Հիմնական միջոցների անվանում | Չափման միավոր | Քանակը | Շահագործման տարեթիվը | Ձեռքբերման արժեքը, դրամ | Ամորտիզացիա, դրամ | Մնացորդային արժեքը, դրամ | Վերագնահատում համաձայն ՀՀ Կառավարության 08.09.98թ. թիվ 280 որոշման: վերագն. արժեքը, հազ.դրամ | մաշվածություն հազ.դրամ | մնացորդ. արժեքը հազ.դրամ | Լրացում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Ցեմենտի պահեստ | մ$^3$ | 96 | 1960 | 4736 | 3493 | 1243 | 2112 | 1613,07 | 498,93 | |
| 2 | Ավանի կենցաղ սպասարկման շենք | մ$^3$ | 71,5 | 1966 | 1127 | 719 | 408 | 14300 | 9513,595 | 4786,405 | բավարար |
| 3 | Հիվանդանոցի պահեստ, խոհանոցի շենք | մ$^3$ | 135 | 1967 | 974 | 607 | 367 | 2700 | 1762,114 | 937,886 | բավարար |
| 4 | Ավանի խանութի պահեստի շենք | մ$^3$ | 52 | 1960 | 1715 | 1268 | 447 | 988 | 762,854 | 225,146 | անբավարար |
| 5 | Ավանի բաղնիքի շենք | մ$^3$ | 306 | 1937-60 | 40123 | 31680 | 8443 | 6732 | 5385,6 | 1346,4 | բավարար |
| 6 | Հակահրդեհային դեպոյի շենք | մ$^3$ | 263 | 1941 | 26505 | 18578 | 7927 | 5786 | 4282,703 | 1503,297 | անբավարար |
| 7 | Ավանի հիվանդանոցի շենք | մ$^3$ | 1277 | 1962 | 21080 | 14761 | 6319 | 28732,5 | 21266,766 | 7465,734 | բավարար |
| 8 | Ավանի խանութի շենք | մ$^3$ | 630 | 1934 | 17889 | 17889 | - | 12978 | 10382,4 | 2595,6 | բավարար |
| 9 | Կոյուղի 700մ, մաքր.շենք 45խոր.մ և մաքր.կայան | հատ | 1 | 1957 | 19555 | 14841 | 4714 | 23904,5 | 19123,6 | 4780,9 | անբավարար |
| 10 | Սարերի լանջերի ամրացում | հատ | 1 | 1961 | 3708 | 3097 | 611 | 16834 | 13467,2 | 3366,8 | քանդված,անբավ. |
| 11 | Ավանի գետափի ամրացում | հատ | 1 | 1934 | 121012 | 121012 | - | 533071 | 426456,8 | 106614,2 | մասամբ փլված |
| 12 | Ավանի ավտոմանապարհային կամուրջ | հատ | 1 | 1937 | 14434 | 14434 | - | 38972 | 31177,6 | 7794,4 | մասամբ փլված |
| 13 | Թունելի ավտոմանապարհային կամուրջ | հատ | 1 | 1947 | 9480 | 9480 | - | 25596 | 20476,8 | 5119,2 | ցանկ. քանդված |
| 14 | Ավանի հակաօդային պաշտպանական կետ | մ | 60*4*4(960) | 1934 | 37178 | 37178 | - | 100561 | 80448,8 | 20112,2 | ցանկ. քանդված |
| 15 | Ծաքեր-ՁորաՀԷԿ ջրատար | մ | 3000 | 1954 | 20485 | 20280 | 205 | 38400 | 30720 | 7680 | անբավարար |
| 16 | ՀԷԿ-ի ջրատար | մ | 1000 | 1954 | 3139 | 3139 | - | 12800 | 10240 | 2560 | բավարար |
| 17 | ՁորաՀԷԿ ավանի ջրատար | մ | 1740 | 1937 | 25770 | 25770 | - | 22272 | 17817,6 | 4454,4 | մասամբ քանդված |
| 18 | Աղբյուր հուշարձան Հ.Թումանյան | հատ | 1 | 1969 | 6309 | 5190 | 1119 | 1769,7 | 1415,789 | 353,911 | մասամբ քանդված |
| 19 | Ավանի կոյուղի ցանց | մ | 2000 | 1937 | 975 | 975 | - | 29000 | 23200 | 5800 | բավարար |
| 20 | Ավանի գազաֆիկացիա | մ | 3000 | 1975 | 2219 | 2219 | 1000 | 622,5 | 365,505 | 256,995 | մասամբ քանդված |
| 21 | Ավանի թիվ1 բնակելի տուն | մ$^2$ | 582 | 1934 | 429 | 429 | - | 55872 | 44697,6 | 11174,4 | մասնակի քայքայվ. |
| 22 | Ավանի թիվ2 բնակելի տուն | մ$^2$ | 581 | 1934 | 719 | 719 | - | 54614 | 42751,2 | 11862,8 | բավարար |
| 23 | Ավանի թիվ3 բնակելի տուն | մ$^2$ | 481 | 1934 | 558 | 558 | - | 45214 | 37111,2 | 8102,8 | մասամբ քանդված, տանիքը նորոգելու |

1/60

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | Ավանի թիվ4 բնակելի տուն √ | $մ^2$ | 481 | 1937 | 687 | 687 | - | 46176 | 36940,8 | 9235,2 | մասնակի քայքայվ. |
| 25 | Ավանի թիվ2 բնակելի բարակ | $մ^2$ | 37,2 | 1937 | 18 | 18 | - | 3571,2 | 2856,96 | 714,24 | ամբավարար |
| 26 | Ավանի թիվ3 բնակելի բարակ | $մ^2$ | 66 | 1934 | 18 | 18 | - | 6336 | 5068,8 | 1267,2 | ամբավարար |
| 27 | Բնակելի տնակներ N1,2,3,4,5,6 | $մ^2$ | 324 | 1991 | 738 | 620 | 118 | 31104 | 15897,6 | 15206,4 | մասնակի քայքայվ. |
| 28 | Թաքերական աթոռներ √ | հատ | 108 | 1957 | 2484 | 2484 | - | 3628,8 | 3628,8 | 0 | մասնակի քայքայվ. |
| 29 | Ակումբի բեմ √ | հատ | 1 | 1957 | 112 | 112 | - | 105,2 | 105,2 | 0 | բավարար |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 384176 | 352255 | 32921 | 1164752,4 | 918936,96 | 245815,444 | |

Հանձնող` «Հայէներգո» ՊՓԲԸ

Նախագահ` ֆինանսական տնօրեն Ա.Ղահրամյան

Անդամներ`

գլխ.հաշվապահ Ա.Հարությունյան

ՋրաՀԷԿ-ի պետ Ռ.Հակոբյան

ՋրաՀԷԿ-ի հաշվապահ Ռ.Թամարյան

Ընդունող` Ջրագետի համայնքի ղեկավար Լ.Գրիգորյան

գլխ.հաշվապահ Կ.Շերմազյան

249

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Փամբակ, Հեռ. +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

N Ե-1112/23
*12 հունիս 2023թ.*

Հարգելի պարոն Խաչատրյան.

Ի լրումն իմ 2023 թվականի հունիսի 12-ի N Ե-1109/23 գրությանը տեղեկացնում եմ, որ 1997 թվականին «Ձորահէկի» կողմից տրված տեղեկանքը /որը համարվում է հանձնման -ընդունման ակտ/ կասկածի տեղիք է տալիս, քանի որ ՍՍՀՄ էներգետիկայի մինիստրություն Հայկական ՍՍՀՄ էներգետիկայի և էլէկտրաֆիկացիայի գլխավոր արտադրական վարչություն «ԴԵԲԵԴԻ ԿԱՍԿԱԴ» ՀԷԿ-ի վարչության կողմից տրված փաստաթղթում նշված չէ հացի արտադրամաս կազմակերպելու նպատակով հատկացված պահեստը մինչև երբ է հատկացված, որից հետո գույքը չի օգտագործվել ըստ իր նպատակի: 1999 թվականի նոյեմբերի 20-ին «Հայէներգո » ՊՓԲԸ-ի կողմից անշարժ գույքի հանձնման-ընդունման ակտով գույքը համարվում է համայնքային սեփականություն, Ձեր կողմից նշված «այլ գույքը» առանձին չի սահմանվում, քանի որ այն մտնում է պատգամավորների գյուղական խորհրդի գործկոմին պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույքի տողի մեջ:

Միաժամանակ Ա. Հակոբյանի կողմից ներկայացված փաստաթղթով, որով վերը նշված գույքը իրեն տրամադրվել է 1997թվականի դեկտեմբերի 22-ին, որպես հացի արտադրություն, հնարավոր չէ քանի որ 1991թվականից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է անկախ պետություն և այդ փաստաթուղթը չէր կարող նրան տրվել, քանի որ այդ ժամանակ չի եղել ՍՍՀՄ էներգետիկայի մինիստրություն Հայկ. ՍՍՀՄ էներգետիկայի և էլէկտրիֆիկացիայի գլխավոր արտադրական վարչություն «ԴԵԲԵԴԻ ԿԱՍԿԱԴ» ՀԷԿ-ի վարչություն և ըստ մեր ունեցած բանավոր տվյալների Ռաֆիկ Հակոբյանը ի պաշտոնե երբևիցե նշված կազմակերպության տնօրեն չի եղել: Ուստի Ա. Հակոբյանի կողմից ներկայացված տեղեկանքը ոչ արժանահավատ է և չի ընդունվել Ձորագետ համայնքի կողմից: Քանի, որ Ա. Հակոբյանը չունի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական գույքը «Հայէներգո» ՊՓԲԸ-ի կողմից հանձնվել է համայնքին որպես սեփականություն հանձնման - ընդունման ակտի և կառավարության 1997 թվականի հունիսի 09-ի N 173 որոշման հիման վրա: ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի 51 որոշման 5-

րդ կետում կատարվել է փոփոխություն՝ սահմանել որ Հայաստանի Հանրապետության քաղաքների և գյուղերի տարածքներում գտնվող ու որևէ տնօրինություն չունեցող վթարային (քանդման ենթակա) պետական բնակելի և այլ շենքերն ու շինությունները համապատասխան քաղաքային ու գյուղական համայնքների սեփականությունն են:

Կից ներկայացնում եմ 1999 թվականին «Հայէներգո» ՊՓԲԸ-ի կողմից անշարժ գույքի հանձնման-ընդունման ակտի պատճենը:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Կատ. Ջրագծերի վարչական ղեկավար՝ Ա. Գրիգորյան
+37494991333